— Կը կամենայի՞ք, որ ձիաները պատրաստէին:

— Ոչ, ես ոտով կը գնամ, — ասաց Ասլանը:

— Աւելի լաւ չէ՞ լինի, որ թողնէիք առաւօտեան: Գիշերով ով գիտէ, ինչ կարող է պատահել:

Աւելի յարմար է գիշերը: Միայն ինձ հարկաւոր է փոխել հագուստս, որովհետեւ ես չէի ցանկանայ, որ այնպիսի տեղերում, ինչպէս են ձեր քաղաքի սրճատները, ինձ ճանաչէին:

Ասլանը փոխեց հագուստը, գլխին ֆէս դրեց, ծածկոեցաւ Վանայ լայն աբայով: Ես նոյնպէս հագուստս փոխեցի, յետոյ ճանապարհ ընկանք:

— Գիշերը չէ՞ք վերադառնալու, — հարցրեց վարպետ Փանոսը:

— Շատ կարելի է, — պատասխանեց Ասլանը:

Արեւը մտել էր, մութը բոլորովին պատել էր Այգեստանի մռայլ փողոցները: Ճանապարհին Ասլանը հարցրեց.

— Դու որեւիցէ զէնք առեցի՞ր քեզ հետ:

— Առեցի:

Բաւական հեռացել էինք վարպետ Փանոսի տնից, երբ Ասլանը թողեց գլխաւոր փողոցը, որ տանում էր դէպի քաղաքը, շեղոեցաւ ճանապարհից եւ մտաւ մի անծանօթ նեղ փողոց: Այստեղ տներ չկային, որովհետեւ ոչ շների ձայն էր լսւում եւ ոչ ճրագի լոյս էր երեւում: Երկու կողմից եւս ձգւում էին այգիների անվերջանալի պատերը: Երկար գնում էինք, եւ ես չգիտէի, թէ ուր ենք գնում: Վերջապէս դուրս եկանք այգիների լաբիրինթոսից, այժմ մեր առջեւ տարածւում էին ընդարձակ, մշակուած դաշտեր: Ետ ընկած լուսինը նոր երեւաց հորիզոնի վրայ:

Հեռուից լսւում էր հնձորի տխուր թախծալի երգը եւ մանգաղի ներդաշնակ հնչիւնը: Այնտեղ մշակները աշխատում էին: Ցերեկոյ տօթը այն աստիճան տոչորում է, ցամաքեցնում է հասունացած արտերը, որ հնձելու միջոցին հասկերից հատիկները թափւում են: Այդ պատճառով հնձում էին այժմ, որովհետեւ գիշերային խոնաւութիւնից արտերը աւելի տամկանում են, եւ հասկերից հատիկները վայր չեն թափւում:

Այն ժամանակ միայն ես հասկացայ, թէ՛ որտեղ ենք գտնւում, երբ հեռուից նշմարուեցան գերեզմանատան բարձր խաչքարերը: Լուսնկայի աղօտ լոյսով այդ լուռ, անբարբառ արձանները նկարւում էին որպէս մի-մի հսկաներ, որոնք, հետզհետէ աճելով եւ ընկղմուելով գիշերային խաւարի մէջ, ներ-